Մ Ա Ս Ի-Բ

Հարկաբյուջետային քաղաքականություն

Երկարաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները

Հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների (եկամուտների, ծախսերի, բյուջետային դեֆիցիտի և պարտքերի) հրապարակումը արտացոլում է Հայաստանի Հանրապետության կառավարության պատրաստակամությունը հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկությունն ապահովելու և այդ բնագավառում հեռահար մոտեցում կիրառելու առումով: Մասնավորապես, կառավարությունը հանձն է առնում համակշռել սոցիալական ծախսեր կատարելու անհրաժեշտությունը կայուն հարկաբյուջետային քաղաքականություն ապահովելու անհրաժեշտության հետ՝ ժամանակի ընթացքում պարտքերի կուտակում թույլ չտալու նպատակով:

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը մշակել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ, որոնք ամրագրված են ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում: ՀՀ 2007-2009թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է նշված երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներով: Դրանք նաև հիմք կծառայեն ՀՀ կառավարության ընթացիկ քաղաքականությունների և երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

Ստորև բերված աղյուսակ 1.1-ում ներկայացված են ՀՀ կառավարության միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը արտացոլող ամփոփ ցուցանիշները:

Աղյուսակ 1. 1 2005-2007թթ հարկաբյուջետային ամփոփ ցուցանիշները

Ցուցանիշներ	2005թ փաստացի	2006թ ծրագիր[1]	2007թ նախագիծ	2007թ կանխատեսում ըստ 2007-2009թթ ՄԺԾԾ
Ա. արտահայտված մլրդ դրամով				
1. Ընդամենը եկամուտներ	374.7	412.4	489.5	447.6
2. Ընդամենը ծախսեր	417.5	482.2	557.8	524.2
- ընթացիկ ծախսեր	329.1	332.2	401.9	381.5
- կապիտալ ծախսեր	75.3	133.0	134.6	122.1
- վարկավորում հանած մարում	13.1	17.0	21.3	20.6
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	42.8	69.8	68.3	76.6
Բ. արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ %-ով				
1. Ընդամենը եկամուտներ	16.7	17.2	16.8	16.6
2. Ընդամենը ծախսեր	18.6	20.1	19.1	19.5
- ընթացիկ ծախսեր	14.7	13.8	13.8	14.2
- կապիտալ ծախսեր	3.4	5.5	4.6	4.5
- վարկավորում հանած մարում	0.6	0.7	0.7	0.8
3. Դեֆիցիտ (պակասուրդ)	1.9	2.9	2.3	2.8
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	2,244.0	2,400.7	2,922.4	2,693.5
Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	4,923.1	5,716.0	8,185.9	5,985.6

Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները

Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 16.8 %-ի չափով կանխատեսված ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 2.3 %-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է ապահովել ծախսերի մակարդակը ՀՆԱ-ի 19.1 %-ի կամ 557.8 մլրդ դրամի չափով: Միջնաժամկետ հեռանկարում նախատեսվում է ապահովել հարկային եկամուտներ և պետական տուրք/ՀՆԱ հարաբերության աճ՝ միջին տարեկան 0.4 տոկոսային կետով:

Նշված պայմաններում դրական միտումները կշարունակվեն նաև պետական պարտքի բնագավառում: Ոչ արտոնյալ վարկերի՝ արդեն իսկ վերաձևակերպված լինելու պայմաններում արտաքին պարտքի աճը էական ազդեցություն չի ունենա երկրի վճարունակության վրա:

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների համապատասխանությունը ՄԺԾԾ-ին

[1] *ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով հաստատված հարկաբյուջետային ցուցանիշներ և դրանց հաշվարկների հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշներ:*

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրավորվող հարկաբյուջետային ցուցանիշները ընդհանուր առմամբ համահունչ են երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներին: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ ՄԺԾԾ հրապարակումից հետո անցած ժամանակահատվածում տնտեսության զարգացման ձևավորված մակրոտնտեսական միտումներն անհրաժեշտ դարձրեցին ՄԺԾԾ ցուցանիշներում որոշակի ճշգրտումների կատարումը (օրինակ՝ 2006, 2007թթ ՀՆԱ-ի իրական աճերի տարեկան ներկայիս սպասումները գերազանցում են ՄԺԾԾ-ով ծրագրավորված ցուցանիշները համապատասխանաբար 4.3 և 3.0 տոկոսային կետով, որն իր ազդեցությունն ունեցավ նաև 2007 թվականի ՀՆԱ-ի անվանական մեծության վրա): Նշված մակրոտնտեսական բարենպաստ զարգացումները հիմք հանդիսացան, որպեսզի Նախագծով 2007 թվականի համար հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ծրագրված ցուցանիշը 37.5 մլրդ դրամով կամ 8.9%-ով, իսկ հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերությունը 0.1 տոկոսային կետով գերազանցի ՄԺԾԾ-ով նախատեսված համապատասխան ցուցանիշները:

ՄԺԾԾ-ի շրջանակներում ծրագրված մուտքերի նկատմամբ փոփոխություններ են կրել նաև ոչ հարկային եկամուտերի գծով ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված գումարները: Ոչ հարկային եկամուտների գծով 2007 թվականի համար ՄԺԾԾ-ով նախատեսվել է 7.1 մլրդ դրամ, Նախագծով՝ 11.4 մլրդ դրամ: Ոչ հարկային եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով ՄԺԾԾ-ի շրջանակներում կատարվածի նկատմամբ Նախագծի կանխատեսումները կրել են ինչպես գումարային, այնպես էլ կառուցվածքային փոփոխություններ: Բացի այդ, 2007 թվականի համար կանխատեսվող 1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան դրամային փոխարժեքը ՄԺԾԾ-ում կիրառված 450 դրամի դիմաց Նախագծում նվազել է մինչև 357 դրամ, որի հետևանքով Նախագծով նախատեսվող ոչ հարկային եկամուտները ՄԺԾԾ-ի համեմատությամբ նվազել են 449.0 մլն դրամի չափով: Չնայած դրան, ոչ հարկային եկամուտները ՄԺԾԾ-ի շրջանակներում ծրագրվածի նկատմամբ նախատեսվել են 4.3 մլրդ դրամի չափով ավելի, որից 3.2 մլրդ դրամը կազմում է հանքարդյունահանման լիցենզառուների և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների կողմից վճարվելիք ռոյալթիի գումարը: Նշված 4.3 մլրդ դրամ տարբերության համար հիմք են հանդիսացել նաև ոչ հարկային եկամուտների կազմում ներառված առանձին եկամտատեսակների գծով ընթացիկ տարվա հունիս-օգոստոս ամիսներին մուտքերի հավաքագրման բարձր աճի տեմպերը:

Նախագծով և ՄԺԾԾ-ով կապիտալի գործառնություններից եկամուտների գծով նախատեսվել են 4.1 մլրդ դրամի չափով մուտքեր:

Պաշտոնական տրանսֆերտների գծով ՄԺԾԾ-ով նախատեսված 15.0 մլրդ դրամի և Նախագծով առաջարկվող 15.2 մլրդ դրամ գումարների միջև 0.2 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է ինչպես տրանսֆերտների կառուցվածքի, այնպես էլ հաշվարկների հիմքում դրված 1 եվրոյի և 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 535.0 և 450.0 դրամ, Նախագծում՝ 466.0 և 357.0 դրամ):

Արդյունքում ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվող բյուջետային եկամուտների ընդհանուր ծավալը ՄԺԾԾ-ով նախատեսվածի դիմաց ավելացել է 41.9 մլրդ դրամով կամ 9.4 %-ով (կազմելով ՀՆԱ-ի 16.8 %-ը՝ ՄԺԾԾ-ով ծրագրված 16.6 %-ի դիմաց):

Վերը նշված փոփոխությունները ազդեցություն ունեցան 2007 թվականի բյուջետային ծախսերի և դեֆիցիտի մեծությունների վրա: Մասնավորապես բյուջետային ծախսերի ընդհանուր գումարը ՄԺԾԾ-ով նախատեսված համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավելացավ շուրջ 33.6 մլրդ դրամով կամ 6.4%-ով (կազմելով ՀՆԱ-ի 19.1%-ը, ՄԺԾԾ-ով ծրագրված 19.5%-ի դիմաց), իսկ դեֆիցիտն անվանական մեծությամբ նվազեց շուրջ 8.2 մլրդ դրամով կամ 10.7%-ով (կազմելով ՀՆԱ-ի 2.3%-ը):

Աղյուսակ 1. 2 ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի ամփոփ ցուցանիշների համապատասխանությունը ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ-ին (մլրդ դրամով)

Ցուցանիշը	2007թ ցուցանիշները ըստ ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ-ի	2007թ ցուցանիշները ըստ ՀՀ 2007թ պետական բյուջեի նախագծի	ՀՀ 2007թ պետական բյուջեի նախագծի ցուցանիշների շեղումը ՀՀ 2007-2009թթ ՄԺԾԾ-ից
1. Ընդամենը եկամուտներ	447.6	489.5	+41.9
2. Ընդամենը ծախսեր	524.2	557.8	+33.6
3. Դեֆիցիտ	76.6	68.3	-8.3
4. Պետական պարտք (մլրդ ԱՄՆ դոլար)	1.49	1.56	+0.07